

ՊԱՅՄԱՆՔ

ՊՈՒԼԿԱՐԻԱ

Տարեկան 12 ֆր.
Տեղամասայ 6 «


ԱՐՏԱՍԱՀԱՆ
2 րիւ մեկ ծրարով)
Տարեկան 14 ֆր.
Տեղամասայ 7 ֆր.

ԱՄԵՐԻԿԱ

Տարեկան 2.60 տր.
Տեղամասայ 1.50 »

Կ Ա Ն Խ Ի Կ

Մանուցման տոյր
20 ամսիս



L R U Գ Ի Բ

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԵՆ ՉՈՐԵՔԱԲԻ ԵՒ ՇԱԲԱԹ

ՀԱՍՑԷ

Rédaction du journal

„Iraouvunk“

V A R N A (Bulgarie)

Редакция

на ВѢСТНИКЪ

„Иравункъ“

ВАРНА (България)

Գրութիւնք եւ
ձեռն տրուի

ՇԵՆՆ ՊԱՐԱՀԱՆԴԻՍ

Ի Ն Պ Ա Ս Տ

ՎԱՌՆԱՅԻ ԱԶԳ. ԵՐԿՍԵՆ
ՎԱՐՉԱՐԱՆԻՆ

Պատիւ ունինք ծանուցանելու քաղաքիս Պատուարժան ազգայնոց թէ յառաջիկայ Չորեքշաբթի երեկոյ, 13 Փետրուար 1902, դիմակաւոր եւ անդիմակ չքեղ պարահանդէս մը պիտի տրուի «Սանթրալի» սրահին մէջ ի նպատակ տեղւոյս Ազգ. Երկսեռ Վարժարանաց:

Կարգադիր Մասնախումբս որ ջանք է խնայած ազգային այս երեկոյթը փայլուն, կանոնաւոր եւ վայելուչ ընելու համար, լիայոյս է թէ պատուարժան ազգային ոչ միայն չպիտի զլանան իրենց լուծման այլ եւ պիտի բարեհաճին ընտանեօք ներկայ գտնուիլ աւելցնելու համար հանդէսին փայլը եւ ազգային արժանապատուութեան մասին ունեցած նախանձախնդրութեան ապացոյցը տալու, նա մանաւանդ յայտ օտարին որմէ բաղմաթիւ կարեւոր անձնաւորութիւններ այժմէն փափաք կը յայտնեն ներկայ գտնուիլ եւ յաջողութեան մասնակցիլ:

Մտից տոմսակի գինն է 5 ֆրանք, իսկ օթեակները տրամադրելի են ամեն անոնց համար որոնք կը փախաքին հատ մը ունենալ այդ երեկոյ եւ որոնց գիներն են մեծ օթեակը 12 ֆրանք, կողմնակի զոյգ օթեակներուն իւրաքանչիւրը ծախան ֆրանք եւ ծայրի երկուքը ճական ֆրանք:

Օթեակները կը ծախուին Մասնախումբին կողմէն որ պարահանդէսին երեկոյին կանուխէն սրահը պիտի գտնուի:

Կարգադիր Մասնախումբ
Վառնա, 8 Փետրուար 1902

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԱՆՑՈՒԴՄՈՂՔ

Մինչ մեր նախորդ թուով կար ձանադրէինք, Յրանց Յերտիւնանա մեծ դուքսի Բեղրսպուրկ այցելութեանը առթիւ, երկու կայսրութեանց մերձեցման քաղաքական ու տնտեսական պատճառները, նոյն միջոցին Անգլո-Ճաբոն դաշնակցութեան մը լուրը եկած հասած էր բոլոր գիւնադիտական աշխարհի ուշադրութիւնը դէպի Մայրաքաղաք Արեւելք հրաւիրելու:

Ինչպէս ըսինք մեր նախորդ թիւի թուրքերէն բաժնին մէջ, արդէն քանի մը տարիէ ի վեր Անգլիոյ եւ Ճաբոնի միջեւ դաշնակցութիւն մը կը սպասուէր: Թ. Արեւելքի բազմամրոյս երկիրները առեւտրական իւր ընդարձակ հրապարակներ ի վաղուց Անգլիոյ ախորժը սրած էին. նոյնպէս Ճաբոն Ասիոյ էն ճարտարագործ երկիրը ըլլալով, իր արտադրութեանց առջեւ կուգէր որ իրեն մօտ գտնուող հրապարակները բաց մնային: Հետեւաբար այս երկու ճարտարագործ պետութեանց շահերը նոյնացած էին Մայր. Արեւելքի մէջ. բայց անոնց շահերուն ուղղակի հակառակող միակ պետութիւնը կը մնար Ռուսիան, որ կը ջանար Մայր. Արեւելքի մէջ նոր երկիրներ իւրացնել եւ օտար ազգերու առջեւ գոցել հրապարակները, միայնակ տիրապետելու եւ շահագործելու համար:

Ռուսական այս յայտնի ձգտումին սպառնալիքը, մանաւանդ Մանչուրիան վերջնականապէս գերաւելու համար ռուս-չին պայմանագրութեան կնքումը փութացուցին տնգլո-ճաբոն դաշնակցութեան մը իրականացումը:

Ահա այդ նոր դաշնակցութեան պայմանները:

«Ստորագրող Տէրութիւնք փափաքող ըլլալով Մ. Արեւելքի մէջ իրաց ներկայ վիճակին պահպանման եւ խաղաղութեան տեսակետով ինչպէս նաեւ Չինոս եւ Գորէայի ամբողջութեան պահպանմանը, համաձայնութիւն գոյացուցած են հետեւեալ կէտերուն վրայ:

1. Եթէ դաշնակց Տէրութիւններէն մէկուն շահերը վտանգի ենթարկուին ուրիշ Տէրութեան մը յարձակողական շարժման հետեւանօք, եւ կամ Չինոս կամ Գորէայի մէջ չիթութիւններ ծագած պահուն, եւ դաշնակց Տէրութեանց շահերը պաշտպանելու պէտքն զգալի ըլլայ, երկուստեք ձեռք պիտի առնուին հարկ եղած միջոցները:

2. Եթէ Դաշնակց Տէրութիւններէն մին ուրիշ Պետութեան մը հետ պատերազմի բռնուի, միւս դաշնակցը թէեւ չէզոք պիտի մնայ, բայց պիտի չիթողու որ երրորդ Տէրութիւն մըն ալ պատերազմի իր դաշնակցին դէմ:

3. Երբ երրորդ Տէրութիւն մը միայնա դաշնակց Տէրութեան դէմ պա-

տերազմող Տէրութեան, միւս դաշնակցը պիտի պատերազմի երրորդին դէմ:

4. Դաշնակց Տէրութիւնները պիտի չհամաձայնին երկրորդ կառավարութեան մը հետ, առանց իրարու կանխախնայող տալու:

5. Դաշնակց Տէրութիւնք առանց իրարմէ գաղտնիք պահելու անպայման կերպով պիտի բանակցին իրարու հետ, երբ վերոյիշեալ շահերը վտանգի ենթարկուին:

6. Սոյն Դաշնակցութիւնը կնքուած թուականէն սկսեալ գործադրելի է հինգ տարի շարունակ:

Այս դաշնագրին նպատակը բացատրող առաջին տողերը որաշապէս ցոյց կուտան թէ՛ ուղղակի Ռուսիոյ դէպի Մայր. Արեւելք առաջ խաղացումը արգելելու համար ձեռք առնուած միջոց մըն է անգլո-ճաբոն դաշնակցութիւնը: Այս լուրը Ս. Բեղրսպուրկ հասնելուն պէս բնականաբար իրարանցումը մեծ եղած է: Ճաբոնական բանակը Անգլիոյ նաւատորմին հետ միացած անյաղթելի պատուար մըն է Ռուսիոյ դէմ, իր աշխարհակալական ձգտումները վիժեցնող. եւ կը կարծուի թէ նոյն դաշնակցութեան մասնակցին Ամերիկայի Մ. Նահանգներն ալ. որովհետեւ միատեղ բողոքած էին Ռուսիոյ եւ Չինի միջեւ խմբագրուած Մանչուրիան Ռուսներէ գրաւուելու պայմանագրին դէմ: Հետեւաբար այժմ Ռուսիոյ կը մնայ Գորէայի ու չինական երկիրներու տիրապետելու ձգտումներէն հրաժարելով, միայն տնտեսական, առեւտրական ու իր նոր շինած երկաթուղիներուն շահագործման ասպարէզ մը նկատել այդ երկիրները:

Ռուսիա Անգլիոյ այս նոր խաղին առջեւ ափ ի բերան մնալէ վերջ, երկրագունդիս ուրիշ մասերուն մէջ Անգլիայէ վրէժ լուծելու առիթներ չեն պակսիր իրեն: Օրինակ. Աֆղանիստանի դռները արդէն Ռուսիա ձեռք առած ըլլալով, կրնայ մէկ օրէն միւսը Հնդկաստանի սահմանազխին վրայ Անգլիան ծանրապէս զբաղւոյցնել. եւ այս զբաղումէն օգտուելով Արեւելքի մէջ, լծքական հողերուն վրայ ու Պարսկական ծոցէն ներս իր աշխարհակալական վաղեմի ծրար-

գիրները գործադրել ջանալ: Եզրակացնելով մեր տեսութիւնը, երկու բառով կրնանք ըսել թէ՛ Անգլո-Ճաբոն նոր դաշնակցութիւնը Մ. Արեւելքի, մասնաւորապէս Չինաստանի մէջ մեծ պետութիւնները զբաղեցնող անկայուն նժարը հաւասարակշռութեան մէջ դրած է այլեւս. ուստի այժմ զխաւորապէս Արեւելեան խնդիրն է որ պետութեանց ուշադրութիւնը պիտի գրաւէ իր սպառնալից վիճակին մէջ:

ԳՈՐԴԷԹ

ՍՈՒԼԿԱՆ ԵՒ ՕՏԱՐ ԵՐԿԻՐ ԵՆՈՒ
Ս Օ Յ Ի Ա Լ Ի Ս Տ Ն Ե Ր Ը

Իրաւունքի 9 թիւին մէջ ցոյց տուինք արդէն թէ՛ ինչ աչքով կը նային Ֆրանսայի սօցիալիստական կազմակերպութիւնները Միլլրանի եւ առհասարակ ժողովրդային գործունէութեան վրայ: Նոյն հայեացքն ունին արտասահմանի, գրեթէ բոլոր սօցիալիստ կուսակցութիւնները:

Ամենէն առաջ Գերմանիայի Սօցիալիստ Դեմոկրատ կուսակցութեան կեդրոնական օրգան Ֆորվարթ թերթն է, որ խստիւ կը դատապարտէ այն սօցիալիստները, որոնք Միլլրանի կը հետեւին:

Աւստրիայի մէջ Կոպրնիկ Յայրմակը, որ կը արտապարտուի յայտնի սօցիալիստ Ծ. Աստրիկ ղեկավարութեամբ, ի միջի այլոց կը գրէ որ Միլլրանը բուրժուա քաղաքագէտներէն միայն իր ֆրազաբանութիւններով կը տարբրի:

Իսկ Ժ. Աղիս անգլիացի Սօցիալիստ Դեմոկրատ Դաշնակցութեան օրգանը հետեւեալը կը գրէ:

«Անկարելի է խոր շահել շտապալ Ֆրանսայի մէջ անցեալի մը զարգացումէն: Ինչպէս մեր ընկերը ժողովուրդն աւելցնելու իր կարողանան շարունակել նեցուկ ըլլալ Միլլրանի, որովհետեւ անիկա ժամանակ առ ժամ մանակ Ս. Էթիէնի նման ճառ մը կը խօսի. քաղաքականութեան մէջ աւելի կարեւոր է ուշադրութեան առնել մարդոց բաժնեւոր քան թէ խօսածները: Այսպէս դատելով Միլլրանը չկրնար այլեւս, իբրեւ սօցիալիստ գործիչ մը նկատուիլ: Միլլրանի նախարարութեան մէջ ներկայ գտնուելու երկարատեւումը, արգարեւ բիծ մըն է, նեաւաւ միջազգային սօցիալիզմի վրայ:»

Ամիդի գաղափար մը տալու հա-

մար, մէջ բերենք նաեւ գերմանացի նշանաւոր սօցիալիստ Բէթէլի կարծիքը, որ յայտնած է գերմանական Ռէյխստագի մէջ, Յունուար 30ին իր մէկ ճառախօսութեան միջոցին, պատասխանելով պատգամաւոր Վոն Հէյլի:

Հոգակաւոր սօցիալիստը, որ մեծ հեղինակութիւն ունի Գերմանիայի բանտարական կազմակերպութիւններու մէջ, ըսած է:

«Միլլիանի ընթացքը մեր կողմէն շատ գէշ ընդունուած է: Կրնայ ըլլալ որ նոյնիսկ մեզմէ մէկն ալ օր մը նախարարութեան անդամ ընտրուէր: Բազմաթիւն ունենայ, ուրեմն եւ ուրանայ իր սկզբունքը, շատ լաւ, մարդ մը կրնայ լքանել իր սկզբունքները, բայց Սօցիալիստ-Դեմոկրատ կուսակցութիւնը զայն միշտ բարձր եւ հաստատուն պիտի բռնէ ու չպիտի ներէ ուրացողին: Միլլիանի խնդրին մէջ կարելի չէ կորսնցնել այն հայեցակէտը, ինչ որ է ֆրանսական բուրժուազիան:»

Կը սիրենք յուսալ որ այս յարձակումներն ու քննադատութիւնները կարող կըլլան ժողովրդական գործունէութեան սխալ լինելը ապացուցանել, որով մօտ ապագայի մէջ մենք կրկին կը տեսնենք Ֆրանսայի սօցիալիստները միացած մէկ դրօշի տակ, թէ՛ սկզբունքով եւ թէ՛ գործունէութեամբ: Եւ եթէ Ֆրանսայի սօցիալիստները հիմա իրենց անհամաձայնութիւններով օտար երկիրներու սօցիալիստներու ուշադրութիւնը հրաւիրած են իրենց վրայ, երբ միանան իրենց գործունէութեամբ նոր զարկ մը պիտի տան սօցիալիզմի հսկայաքայլ յառաջացման:

Խ. Դիմաֆսեան

ԹՂԹԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

ՍՕՅԻԱ, 7 Փետրուար

Ընտրողական պայքարը կը շարունակուի շատ եռանդուն կերպով: Երկար տարիներու ընթացքին մէջ այս առաջին անգամն է որ կը տեսնուի այսչափ յուզում, այսքան շարժում եւ նմանը չտեսնուած ոգեւորութիւն բոլոր քա-

ղաքագէտ անձանց եւ նոյնիսկ ժողովրդին մէջ:

Ճիշդ տասն օր վերջ, փետր. 17ին, պիտի կատարուի ազգային երեսփոխաններու ընտրութիւնը համայն Պուլկարի մէջ, ուր այս անգամ փոխանակ 166ի պիտի ընտրուին 189 երեսփոխաններ: (Ըստ Սահմանադրութեան, 20,000 բնակիչ ունեցող շրջանակ մը, մէկ երեսփոխան կը ներկայացնէ Ազգ. Ժողովոյ մէջ, եւ որովհետեւ նոր մարզահամարը մօտ կէս միլիօնի առաւելութիւն մը ունի նախորդինէն, 23 նոր անդամներ կ'աւելնան Սօցիալիստներու մէջ: Այս արտասովոր ոգեւորութեան զինուոր պատճառն է այն տնտեսական նեղ դրութիւնը ու մէկ երկու ամիս առաջ տապալեց թէ նախարարութիւնը եւ թէ Սօցիալիստները (Աստուած երկրորդէն պահէ): Եւ այդ ոչ հանդուրժելի կացութեան նպաստաւոր ելք մը տալու համար ժողովուրդը կուզէ այնպիսի անձեր ընտրել իբր երեսփոխան, որք կարենան իրաց արդի վիճակին արմատական դարման մը տալու միջոցին աւելի հայրենասիրական ձգտումներով տոգորուած ըլլան, նկատի ունենալով հայրենիքի քերական շահը:

Իսկ, ինչ են արդեօք այն շարժառիթները որք երկրին կացութիւնը հասցուցած են այս տագնապալի վիճակին: Արդեօք Պուլկարի աշխարհը երկրի մըն է որ բնական եւ արհեստական արտադրութիւններէ զուրկ կարող չէ գէթ իր պէտքերը գոհացնել, եւ միթէ վաճառականութիւն եւ հաղորդակցութիւն այնչափ անպատասխարատ կարողանալու տակ կը գտնուին որ փափագուած արդիւնքը ձեռք բերելու համար անդիմադրելի խոչընդոտներ եւ դժուարին արգելքներ հանդիսանան: Ընդհակառակը, Պուլկարի, իր բնական եւ հողագործական արդիւնաբերութիւններ-

ով հարուստ, իր հանքերով, բերքերով եւ արտադրութիւններով ճոխ, երկաթուղւոյ գծերով ցանցի նման բոլոր քաղաքներն իրար կապուած եւ ըստ բաւականին ծաղկեալ վաճառականութեամբ երկիր մըն է:

Սակայն, պետական վարչներ եւ երկրին զեկը իրենց ձեռքը ունեցողներ, իրենց յանձնուած պաշտօնը երբեմն չարաչար կը գործածեն, անհեռաւոր եւ անշահ քաղաքականութեան հետեւելով, աւելի կուսակցական ոգիով ներքին երկպառակութեան սերմեր ցանելով եւ պաշտօնի զուլի գտնուած տունն աւելի իրենց անձին քան թէ տէրութեան շահը նկատելով, աւելցնելով զատ երբեմն, ի վնաս տէրութեան զանձին մեծամեծ զեղծումներ գործելով: Եւ միւս կողմէն մի քանի տարիէ ի վեր երաշտութեան կամ չափազանց անձրեւի եւ աւերիչ հեղեղներու պատճառած հոնձքերու եւ բերքերու փճացումը եւ հետեւանք այս անյաշնութեան անփոխարինելի կորուստը ստեղծեցին վիճակ մը որ պիտի է ներկային:

Այնպէս, պուլկար մէկ բարեկամի հետ, հին գործիչ մը, նստած կը խօսակցէինք այսպիսի նիւթերու վրայ, նկատել տուի բարեկամի թէ լաւ օրէնքներու չգործեան պատճառաւ շատ անգամ արդարութիւնը ոտնակոխ կըլլայ, իրաւունքը կը բռնաբարուի: Ո՛չ, պատասխանեց բարեկամը, մեր օրէնքները գերազանց են, ամենէն նոր դրութեան վրայ հիմնուած, միայն թէ, մենք, պուլկարներս, այդչափ ազատ հիմերու վրայ հաստատուած Սահմանադրութեան եւ օրէնքներու համար պատրաստուած ժողովուրդ չէինք դնու: Այս միջոցին ծերուկ մը, վաղիմի ծառի վերին, ինչ կայ, ինչ չկայ ծերուկ, հարցուցինք մենք, կըսեն

որ, պատասխանեց ծերուկը, կէս մը կատակաբանօրէն, իրաւը պիտի գայ տիրէ Պուլկարիոյ, եւ քանի որ, շարունակեց նա, ուսը իմ ցեղիս բաժանումներն է, (սլաւ), ունի նոյն կրօնքը, նոյն լեզուն, ինչ որ ես ունիմ, թող զայ տիրելու: Եւ տիրելով երեք հարիւրի չափ անձեր պիտի կորսնցունեն իրենց ազատութիւնը, որ միայն երեք հարիւր անձեր կապահովէ, եւ զոր ես կը մերժեմ եւ չեմ ընդունիր: Այսով ակնարկութիւն ընել ուզեց մեծերու, կառավարչներու, գաւառապետներու եւ այլնի որոնք միայն կը վայելեն իրաւազատութեան բարիքները, մինչդեռ հասարակ ժողովուրդը, գիւղացին, երկրագործը եւ նոյնիսկ ամբողջ երկիրը երբեմն կը քաւեն ատոնց մեղքերը:

ԱՐՄԵՆԱԿ

ԱՅԼ ԵՒ ԱՅԼՔ

Ինչ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՐՍ ՄԸ. — Պուլկարի Ռոնջատ գիւղին մէջ ինչ տարի առաջ քահանայ մը իր երեք տարեկան աղան կը պսակէ իր դրացուհիին ինչ տարեկան աղջկանը հետ: Այս հակաբնական ու տարօրինակ ամուսնութեան հետեւանօք այս վերջերս 18 տարեկան հարսը պսակակիցին տունէն կը փախչի ուրիշ տասարդի մը, որ պսակեալ 12 ամեայ մանուկ փեսային դեռ չստացած առնական կատարելութեամբ օժտուած է: Վիճակին Առաջնորդարանը Մարգարիտը որ ամուսնալուծութիւն կը պահանջէ, վաղ մը կը փակէ ու պատրիարքարանէ հրահանգի կը սպասէ: Այս տարօրինակ ամուսնութեան բուն պատճառը կը հասկցուի թէ փոքրիկ փեսային քահանայ աղջկանց հայրը որ ակէ երեք տարի առաջ մեռած է, իր դրացի Մարգարիտի մօրը հետ համարձակ յարաբերութիւն կրնալ ընելու համար այդ պսակը կատարած է:

Կը կարծենք թէ կրօն. ժողովը պիտի արտօնէ այս ամուսնալուծութիւնը, զի քահանայ պատճառներէ զատ, ինչ տարի առաջ քահանայ իր մեղա-

ԽԵՐԹՈՆ, ԻՐԱՆԻՆԻՔ

ՅՈՒՆԱՑ ԱՊՍԱՄԲՈՒԹԻՒՆԸ

Մեր հայրենիքի նուիրական դատը ազգովին վարելու եւ ամբողջ հայութեան ուժերը ու ջանքերը միացնելու համար գործնական ու խրատական օրինակներ կուտայ մեզ Յունաստանի ապստամբութեան եւ ազատութեան պատմութիւնը: Հոն կը տեսնենք յոյն ժողովրդի գերազանցապէս հայրենասէր ոգին, որով ազգովին վառուած, ամբողջ քաղաքներու ու գաւառներու յոյն բնակչութիւնը, գրեթէ առանց բացառութեան, գէն ի ձեռնին մահուան կը դիմէ միայն իրեն նշանաբան ունենալով հայրենիքի ազատութիւնը: Հոն չենք տեսներ բնաւ այսինչ կամ այնինչ «ական»ներու խումբեր ու

ընկերութիւններ: Այլ միայն մէկ ընկերութիւն, էթէ՛ՐԻԱՆ, բոլոր աշխարհէ Յոյսերը բլրան է միացուցած, կամ բոլոր Յոյները այդ միակ դրօշին տակ են համախմբուած:

Վերջապէս շատ տեսակէտով օգտակար կը դառնան Յունացի տանի ապստամբութեան համառօտ պատմութիւնը հոս արտասպանով, մեր ընթերցողաց վերջին շնորհիւ 80 տարիներ առաջ մեզ վիճակակից ազգի մը դիւցազնական զոլ ծունկէութեանց երկար շարքը:

Սուլթան Մահմուտ բարեկարգութեանց եւ լուսութեանց դրացի միջոցը, հարկ եղաւ որ զանոնք թողու եւ նոր ու թշուառ պատերազմի մը զբաղի ընդդէմ Յունացի, որոնք իրենց ազատութիւնը ձեռք բերելու համար կը կռուէին: Յունաստան չորս մեծ փաշայութիւն կը բաժնուէր: Ուլա-նիկի, Նանիայի, Լիվատոյի ու Է-

հին Նուրիան եւ Դրիփոլիցա, որուն մէջ կը պարունակուէր նաեւ Մորէա: Բաց ասոնց կային Գանատի, Նէկէ-փոզ, Կիկլադայք եւ Սփորաքեան գլղիք, որոնք ընդհանուր ծովակալին հրամանատարութեան տակ էին: Իրենց եկեղեցական իշխանութեան գլուխն էր Կ. Պօլսոյ Պատրիարքը իր սրբազան սրբնորոգով որ կանուանէր եպիսկոպոսոսը եւ ընդդէմ եպիսկոպոսաց բողոքները կը դատէր: Պատրիարքը բաց յեկեղեցական իշխանութեանց էր նաեւ Բարձրագոյն Դրան առջեւ աշխարհական գլուխ մը, ինքը տուրքերը կը բաժնէր, եւ իր ազգին յանցաւորը ինքը կրնար դատապարտել եւ թիոյ ծառայութեան զրկել:

Որչափ որ Յունաստան փաշաներու հրամանատարութեան տակ էր, սակայն եւ հայրենասէրներէն եւ նոյն իսկ ազնուականներէն շատերը լեռները ապաւինած ըլլալով, երբեմն երբեմն զաշտային բնակչաց վրայ, թէ տաճիկ ըլլային եւ թէ յոյն, յարձակումներ կընէին: Եւ օսմանեան Պետութիւնը չկրնալով ասոնց դէմ գնել, զաշինք մը դրած էր անոնց հետ, ու

րով տուրք մը վճարելով փաշային, կարենան զենք պահել եւ իրենց օրինօք կառավարուել: Դաշտային ժողովուրդը ալ իրենք զիրենք պաշտպանելու համար ազգային զինուորութիւն մը կազմեցին, որունը շատ անգամ տաճիկ փաշաներուն հետ տարածայնութիւն կուենային: Մինչեւ իրենք ալ ստացան այն ազատութիւնները զոր ունէին լեռնաբնակը: Այսպէս Յոյսը փաշաներուն իշխանութեան տակ ըլլալով հանդերձ, իրենք կընտրէին իրենց զատաւորները, հարկապահանջները, եւ եթէ ունէին տառապանք մը երբեմն փաշաներուն ընչաքողը եւ անառակ բարձր էր որ զիրենք յինքնիշխանութիւն կը յորդորէր: Արդէն թէ՛ կատարինէ Բ. Ռուսիոյ եւ թէ՛ Անգլիոյ Անան թագուհին ինչպէս նաեւ Նաթլէնի պատեւրազմաց ժամանակ Անգլոսալոնի Յունաց ազատութեան յոյս մը տուած էին: Բայց Յունաց կողմանէ որ եւ իցէ խլրտմունք արդիւնք մը չէր ունեցած, ինչպէս նաեւ Ռիկասի ապստամբութիւնը: Ռիկաս բունուհեալ Աւստրիացւոցմէ, յանձնուեցաւ Տաճկաց, որոնք

պարտ կերպը գոհացնելու իբր պատրուակ այդ պատկի խորհուրդը կատարած է: Բոլորովին ապօրինի, այսինքն բարոյապէս անձեռնհաս կերպով կատարուած խորհուրդ մը կամ գործ մը չեղեալ պէտք է նկատել:

* * Անգլիոյ մէջ քեներին հետ ամուսնութիւն արտօնող օրինագիծ մը երեսփոխանական ժողովին ներկայացուած եւ 124ի դէմ 249 ձայնով ընդունուած է:

* * Անցեալ շաբթու Վիեննայի մէջ քանի մը օգնականներ օգային ճամբորդութեան փորձեր ըրին: Յայտնի օգնականներ Արհիդուքս Լեւոնտ Սալվադոր իր կնոջ հետ առաւօտեան ժամը 9ին օգնականի նստաւ եւ 4 ժամ 15 վայրկեան վերջ Պրէսլաւ հասաւ: Այս քաղաքէն Վիեննա 8 ժամ կը տեւէ ճեպընթաց կառավարմամբ:

* * Ձարուհին բնաւ չախորժիր հրապարակային ցոյցերէն ու խանդավառ կեցեցեանքէ: Գրիլ մէջ օր մը գործարան մը այցելեց, եւ ժողովուրդը իմանալով խանուեցաւ փողոցին մէջ: «Ետեւէս ճամբայ չկայ», հարցուց Ձարուհին: «Մէկ ճամբայ միայն կայ այն ալ փոսի մը վրայէն» պատասխանուեցաւ: «Ուրիշ կամը՞նչ մը բերէք» ըսաւ Ձարուհին ու անով անցաւ փոսին միւս կողմը ու իր կառքը հասած կըսպասէր իրեն:

* * Ռուսներու իրիշխան գաւառի Ռանդի գիւղին մէջ գիւղացիները ազատութեան մը սպաննեցին: Ազատականութեան օրը գիւղացիք բերրով սպաննեցին դատախազին հասնելուն, ու դատարանին դրան առջեւ զանի ծեծելով սպաննեցին:

ԴԱՍԱԽՕՍՈՒԹԻԻՆ

Փրանսերէնի եւ Գերմաներէնի հմուտ երիտասարդ մը տրամադիր է այդ երկու լեզուները սովորել ուղղորդուել, գոհացուցիչ պայմաններով, դասեր տալ: Դիմել խմբագրութեան:

Դանուբի մէջ խղճեցին զինքը: Գրիլ վերջը Սերպիան ապստամբեցաւ Գէորգ Զեռնիքի առաջնորդութեամբ:

Սակայն հայրենասիրաց մաս մը յուսով առաւել ի ձեռն գիտութեան քան զինուց զարթոյցանել հայրենիքին: Մուսախիւրաց ընկերութիւն մը կազմեցին, որուն նպատակն էր հելլենական գիտութիւնքը զարգացնել, եւ որոնց թուոյն մէջ էր նաեւ Գափուտիսիա կոմսը, Ռուսիոյ նուիրակներէն մէկը յարգալից Գիւննայու: Հայրենասէրք իրենց եռանդեան մէջ աւելի մղուելով եւ Տէփէտէլէնի Ալի փաշային յանգուգն օրինակէն խրախուսեալ, որ ինքզինքը Բարձրագոյն Դռնէն յայտնի ապստամբ հրատարակեր էր, ընկերութիւնը (Էթեռիա) հաստատեցին, որուն պարտքն էր ընտանեաց մէջ եղած թշնամութիւնքը մարել, եւ ջանալով բոլոր Յոյները միացնել՝ անոնց ազատութեան համար աշխատել: Ամենայն նորոնախի անձն հարկ էր որ երդնուր խալի վրայ քահանայի մը դիմաց, զոհելու իւր ինչքը եւ կեանքը Յունաստանի ազատութեան համար, հնա-

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Պատրիարքը խառն ժողովով վերջին նստին որոշման համաձայն, Թագրիբով մը դատական նախարարութեան տեղեկութիւն տուած է թէ Ատանայի մէջ տեղի ունեցած ընտրութեամբ Երէցեան Սրբազան Կիլիկիոյ Կաթողիկոս ընտրուած էր թէեւ, բայց հրաժարած է եւ կարելի չէ եղած համոզել զինքն որ ստանձնէ այս պաշտօնը: Հետեւապէս նոր ընտրութիւն պիտի կատարուի:

— Էջմիածնէն հեռագիր մը հասած է Պատրիարքարան որ՝ Կիւմսնէ թէ Շամախի մէջ ահաբեր երկրաշարժ մը տեղի ունեցեր է, բոլոր տունները կործաներ են, բազմաթիւ անձեր մեռեր են, ժողովուրդը փողոցները մնացեր է, շուրջ 25,000 հոգի անպատուար են եւ ուսեստէ զուրկ: Մեռեալներու եւ վիրաւորեալներու թիւը մինչեւ 300 կը հաշուուի:

— Վեհ. Կաթողիկոսը այս օրերս կրկին Տփլիս պիտի երթայ ուր պիտի անցունէ ձմեռուան մնացեալ մասը:

— Ալեքեան Պատրիարքի յետնեալ ամսականները ազգէն զանձեւ համար հանգուցելոյն քոյրը Պոլսոյ վճարեկ ատեանին գիւմար էր: Դատաւարութիւնը կատարուելով ինպատու պատրիարքարանին վճիռ արձակուած է:

— Հաճընի մայր եկեղեցւոյն մէջ գողեր մտնելով, արծաթ խաչեր պատարագի վերաբերեալ զգեստներ ինչպէս նաեւ գանձանակներու մէջ գտնուած դրամները գողցած են:

— Պարսից Շահը Շիր խուրջիտ պատուանշանին Ա. աստիճանը տուած է Հայ-Հռոմէականաց պատրիարք Տ. Պողոս Էմմանուէլեան սրբազանին:

— Մուշի Ս. Առաքելոց վան.

քը առանց վանահայրի մնացած ըլլալով, Մշոյ առաջնորդարանը պատրիարքարանէն խնդրած է Բաբերթի նախկին տեղապահ Տ. Յովհաննէս վրդ. Յակօբեանը վանահայր կարգել: Այս վարդապետը ընկի Մշոյ եւ տեղւոյն հանգամանաց ծանօթ ըլլալով այդ պաշտօնին հրաւիրուած է:

— Բարիզի հովիւ Տ. Վառժա. պուհ քահանայի ձեռքով կարնոյ արկածեալներու զրկուած գումարը 600 ֆրանք է:

— Կրօն. Ժողովոյ ատենապետ Գեր. Տ. Մանկունի Սրբազան Ազգ. Հիւանդանոցին կտակեր է Գաղղիւղի մէջ իր ունեցած 500 ոսկինոց մէկ տունը, պայմանաւ որ մինչեւ իր մահը ինք ստանայ անոր վարձքը:

— Իզմիրի բողոքական ազգայիններէ երկու բարեսէր անձեր, մին 100 եւ միւսը 250 ոսկինոց երկու տուն կտակեր են եկեղեցւոյն:

— Կարնոյ Սանասարեան վարժարանը խորհրդ փոխադրելու ծրագրելը գործադրութեան դրուելու վրայ է: Կըսուի թէ խորհրդի Սարսուրի վանքն մէջ պիտի հաստատուի Սանասարեանը: Այս վանքը սքանչելի դիրք, մաքուր օդ ու ջուր, եւ մշակելի հողեր ունի: Սանասարեանի արդի շէնքը Կարնոյ ազգ. կառուածն է, որուն պէտք ունի այժմ Կարնեցիին, քանի որ երկրաշարժի պատճառաւ շատ մը ազգային շէնքեր փճացան:

— Մշոյ մէջ մինչեւ դեկտեմբերի վերջը օգերը շատ լաւ գացած են, բայց այս վերջոյս կանգուեց մը աւելի ճրկ տեղացած է եւ Սէն մընչեւ 18 աստիճան վարցուրտ կընէ:

— Մշոյ Ս. Առաքելոց վանքը որչա՞ք քաղաք փոխադրելու առեւ մէկ քանին հրաւիր ըլլալով դատ սենեակի մը մէջ կը դար.

մանուէին. այժմ ապաքինած են:

— Նիքօքօլէ փետր. 7 թուական. նաւ կը գրեն մեզ թէ Արմատեցի Խաչիկ Պետրոսեանի ամուսնացած լինելը եւ կնոջը ողջ ըլլալը հաստատող նամակներ հասնելէ առաջ, անցեալ կիրակի օր (3 փետրուար), երկու պաշտօնական քանակներով վրա. յոյսեալք, պուլկար եկեղեցւոյն մէջ կրկնամուսնութիւնը կատարուած է, հակառակ տեղւոյն ազգայնոց Տէսօթի ըրած դիմումներուն:

Մենք չենք հասկնար թէ երկու պուլկար քահանանք ինչպէս սուտ վկայութիւն կուտան պանդխտի մը համար, զոր միայն 1-2 տարիէ ի վեր կը տեսնեն: Այս բացարձակ զեղծումը՝ որ գէշ օրինակ մը կըլայ բազմաթիւ հայ ընտանիքներու հիմը քանդելու, ուշագրութեանը կը ներկայացնենք Գեր. Այցելու հովիւին, որուն պարտականութիւնն է նախ Նիքօքօլէ Տէս. բօթէն բացատրութիւն պահանջել, եւ ի հարկին մինչեւ պուլկար Սի. նոգրիս դրմել:

Կանդրադառնանք այդ նիւթին:

ՉԻ ՎՃԱՐՈՒՆԵՐՈՒՆ

Մեր բաժանորդներէն անոց որ ցարդ չեն հաճած իրենց անցեալ տարւոյ հաշիւը մաքրել, թող փուլ թան մինչեւ փետրուար 15 պարտքերնին վճարել: Սթէ այս առգամ ալ թերանաս, այսպիսիք իրաւունք չը պիտի ունենան ո՛ր եւէ առարկութիւն ընելու, երբ իրենց անունները մի առ մի հրատարակենք իբր անպարտաճանաչ եւ ազգային թերթի մը դրամը իւրացնողներ:

Եթէ բաժնեգրն վճարել չեն ուզեր թերթը պէտք է մերժուի: Եթէ թերթը կը մերժեն, պէտք է պարտքերնին ալ միաժամանակ զրկեն: Թերթի մը անընդհատ հրատարակութիւնը ծանր աշխատութիւն է գաւառեան ծախքի կը կարօտի: Իսկ այդ ծախքիս դրամը միայն բաժնեգրներով է որ կը հայթափուի: Իրաւունք չը զրկուի որի միջոցներու դիմել ինքզինք ապրեցնելու համար:

Իր անբաւ հարստութիւնքը ընկերութեան գանձուն բաշխեց. բայց շատ դժուարութիւն գտաւ ի սպգբան այնչափ գանազան տարերայնէ կազմեալ ժողովուրդ մը միացնելու համար: Ինքն ալ չուէր ոչ զինուորական եւ ոչ կառավարութեան այն յատկութիւնքը որոնք այսպիսի ժամանակի կարեւոր էին: Ամեն կողմ ծածուկ ապստամբական հրատարակութիւններ ըրաւ պատրաստ սպասելու այս պատերազմին զոր պիտի սպէնք եւ որուն սկիզբը իրմէ առաջ տուաւ Բաժրագոյն Դրան կուսակալներէն մէկը՝ Տէփէտէլէնի Ալի փաշաք:

Զ. Մ. Ն. ԻՐԻՍԱՆ

(Շարունակելի)

պէս պիտի ունենան: Գոհ չեմ մեռնիր, մինչեւ որ իմ խեղճ Յոյներու համար բան մը չընեմ. Երկրից նշանի մը կը սպասեմ):

ՀԱՎԱՏԻՍՍԹԸ ԲՕԼԻԹԻԳԻՅԷ

ԹԻԻՐԻՐԻԱ

Տամատ Մահմադ Բաշանըն գո- նաղը, հարէմ տարեկերի վէ էվ- լիրի ատլիյէ նազարէթի թարա- ֆընտան հագընէն սաթըլաճաղը Սթանպոլտան պիտիբիւմի տիր:

— Քեզա Բաշայի միշարիւն- հէ հէմէֆընար վէ շէրիքի ճինա- յէթ (") օլմագ թէօհմէթի իլէ 47 քիշի Թարապոլտա վէ Արապիս- տանա մէնֆի կէօնտէրիւմի տիր- լէր:

— Միւթար Բաշանըն հայտար նամ մախտուճը վէ միւրալայ Զէ- քի՝ տէվլէթէ խընանէթիլիք իթմէք մագսէտի իլէ գոմիթէլէր թէշ քիլ իթմիշ օլմագ թէօհմէթի իլէ մագնուն ատտ իտէրէք՝ մահքէմէյի ճինայէթտէն ալէյհէրինէ տէր- աէսթլէ թէվլէքէ էմրի վէրիւմի տիր:

— Միւ Սթօնըն խէլասը իշիւն թախտիս օլընմըլ օլան ագճէնին շաֆլէրէ վէրիւմիշ օլմասընը հագտըղըմըլ իւզրէ, Աթանա Հապաս տախի թաստըգ իտուպ, հագը- նէն անըն սէրպէսթ պըրագըլմասը իշիւն մուայէն միւտտէթ խիթամ պուլաճաղընը տախի իլմվէ իթ- միշ տիր:

— Աճէմ քէօրֆէլինտէ Գօնէթ մէսէլէսի միւշքիւ հալէր քէսպ իթմէքտէ կէօրինիյօր: Ինկիլիզ վաթօրլարը գարայա թօրլար էն- տիրմիշ իտիլէր:

Սէգըիւր թօրլարըն գալտըրըլ- մասը պապընտա ինկիլթէրայա իթմար օլընմասընը Սուլթան Պա- պը Ալիյէ էմր իտուպ, թօրլար գալտըրըլմատըղը հալտէ՝ օսմանը տէվլէթի Գօնէթ մէսէլէսի լա հէյտէքի սուլհ գոմիսթօնընա իհա- լէ իթմէյէ մէճպուր օլաճաղընը պիտիբիւմի տիր:

— Իթալիանըն Պահրը Սէֆիտ տօնանմասը շու սըրա Սքէցիա սուլարընտա պուլընմագտա տըր: Բօմատան վէրիլէն պիր մալիւմա, թա պինան, մէգըիւր տօնանմա- յա թարապոլտա կիթմէք իւշիւն հաղըրլանմագ էմրի վէրիւմիշ, զի- րա օրատա իթմիլալ գուհալըն- տէն գօրգուլմագտա ըմըլ:

— Տիւնեանըն Բէք շօգ թարաֆ- լարընտա Եահուտիլէր թաագիպ ու թազիթ օլընտըղլարընա մու- գապիլ, Սթանպոլտա աքսի օլա- րագ, հիքմէթի հիքիւմէթ իգիթի- գասընտան, Եահուտիլէր հայ տուտըղա պաշաճըլար տըր: Կէ- չէն Բաշար կիճէսի Սալամոն վէ Եուսէֆ նամ իքի Եահուտիլէր իքի թիւրք գասապլար իլէ՝ պիր ֆայ- թօն իւզէրինէ հիւճամ իտէրէք, տէրունիտէ պուլընան իքի թիւրք պէյլէրի սոյմագ թէշէպպիսինտէ իքէն, պէյլէրի գօրգուտմագ իշիւն րէվօլվէր տախի սրգմըլ օլմալա- րընտան նաշի, սիլահ՝ սէսինտէն

գապթիլէր Եէթիւմիշ: հայտուտ- լար հէր նէ գատար գաշմըլ իսէ- լէրտէ, նիհայէթ հագայլը էլէ վէրմիշէր տիր:

Քեզա Ալիան—Սարայտա Գառ- նիկին վէ տիկէր պիր էրմէնինին իւզէրինէ պիր գաշ Եահուտի հիւ- ճու իտուպ, Գառնիկի ճէրհ իտէ- րէք ֆէսլէրինի վէ չատըրլարընը ա- լուպ գաշմըլար տըր:

Խաս—Քէօյտէ տախի Եահուտի- լէրտէն պիր խըրսըղ գուլմաննասը պուլընմըլ տըր: Ալիամ վէ Նէսիմ իսմինտէ իքի Եահուտի Խաս Քէօյ չարշըսընտա զէյլին ֆըշըլարը Եուզարայուպ կէօթիւրի իքէն, գապթիլէր չիւրհէլէնէրէք անյէ- րի իսթինթագ իթմէլէրինտէ, մէգ- քիւր ֆըշըլարըն տէնիզ իւզէրին- տէ պուլընան մագնունալարտան չալմըլ օլտըղլարը թէպէլիւն իթ- միշ տիր:

ՏՈՒԼԻԿԷ

Ֆէխամ. Բրէնս ֆէրտինանտ հաղրէթլէրի ֆաթիլնաճա սէպէպ- լէրտէն տօլալը խարիճէ կիթմիշ օլուպ, մէսալիհին թէսթիլէսինի հէյէթի վիւքէլայա իհալէ իթմիշ- լէր տիր:

— Հիւքիւմէթ Բարթիսինին րէյիսի Մ. Տրական Յանքօֆ աղըր սու- լէթտէ խասթա Եաթմագտա ի- սէ տէ, թապիպլէր անըն չիֆա- Եապ օլմասընտան գաթի իւմիտ կէօրինմէյօրլար:

— Սօֆիատաքի Եէնի օսմանը գոմիսթի ֆէրրահ պէյ չիմտիլիք Թիւրքիայա կիտէնլէր իշիւն միւշ- քիւլալթ կէօսթէրմէյուպ, բասա- բօրթլարը գայտ իթմէքտէ օլտըղը կիպի, բասաբօրթը օլմայանլարա տախի՝ Թաղապան Խորհուրդ- տան շահատէթնամէ իպրագ իթ- մէլէրինտէ՝ Եէնի բասաբօրթ վէր- մէքտէ պուլընտըղըն Սօֆիատան մէմնուիլէթլէ պիտիբիւմի տիր:

Մալիւմ օլտըղը իւզրէ, մէր- գււմ սապըգ Մ. Ալիբիկա էլիսի օլմագ հէսապի իլէ, մէտէնիլէթ ու նէպաքէթտէն պիպէհրէ օլմայա- ճագ տըր:

ԱԼՄԱՆԻԱ

Ալմանիանըն Եէնի կէօմրիւկ թարիֆէսինի թէտըղը իտէն գօ- միսթն էքսէրիլէթի արա իլէ մէգըիւր թարիֆէի մագարաթը կէօրիւպ րէտտ իթմիշ տիր: Պու- նուն իւզէրինէ գոմիսթնըն րէյիսի Մ. Քարտօրֆ իսթիֆասըն վէր- միշ տիր: Պիր րիվիլէթէ կէօրէ տախի, մէգըիւր կէօմրիւկ թա- րիֆէսի 1905 Յունվար 1տէն էվ- վէլ մէվլէրի իճրայա գօնըլմամագ գարարը վէրիւմիշ:

— Եէնի պահարտա Բուսիտա իճրա օլընաճագ մանէվրալարտա հաղըր պուլընմագ իւզրէ՝ իմքէ- րաթօր վիլհէլմ Զարը զիւսարէթ իտէնէք տիր: Պու սէպէպտէն

Ֆրանսա ճուհուրիլէթ րէյիսի Մ. Լուպէ պիր իքի հաֆիթա տահա սօնրա Բէթրսպուրկա կիտէնէք տիր:

ԹՐԱՆՍՎԱԼ

Պօէրլէր ֆիտրվար 12տէ Գիլբ- րիվըր ճիվարընտա 150 քիշիլիք պիր ինկիլիզ պէօլիւկինի արան- սըղա կէթիւրուպ, ինկիլիզլէրտէն 12 քիշի էօլիւ վէ 48 Եարէլի պը- րագմըլար:

— Լօրտ Գիշնէրին Ճէնուպի Աֆրիգատան Ապրիլտէ կէրի չա- ղըրըլուպ, տէրհալ Հինտիա օր- տուսընըն ումում գօմանտանըղընա թային օլընարագ, Եէնի մէրքէզի մէմուրիլէթինէ կէօնտէրիլէճէկինի Ֆիկայրօ տախի թաստիգ իտէյօր:

— Մահարիստանտան աթմար սաթըն ալմագտա օլան ինկիլիզ գապիթլէր Բէք շօգ հիլէքէար- լըղլար իտուպ, քիւլիլէթի բարա Եէմիշլէր:

ԱԻՍՏՐԻԱ

Թրիւսթէտէ իշիլէր թէքիթի իթմիշ օլտըղլարը պաղը շարթլա- րընը գապուլ իթմիթմէք իշիւն՝ իսթիլալ չըգարմըլ տըրլար: Շէհ- րին Եպիլիլէրի սիհահ պանտէրա- լարլէ տօնատուպ, սօգաղարտա կէզէրէք թաշլարլէ՝ ճալար գըր- մագ վէ բօլիս մէմուրլարը իւզէրի- նէ հիւճիւմ իթմէք կիպի ուլիւն- սըղըղլար վուգու պուլմուշ: Էհա- լիլ թէսքին իւշիւն ճէլպ օլընան ասքէրլէր պաղը մահալլէրտէ ֆէսատճըլար իւզէրինէ աթէշ էթ- մէյէ մէճպուր օլմուշլար: Ֆաղաթ իշիլէր տախի րէվօլվէր աթմագ- տա օլտըղլարընտան, էհալիտէն խալլը վէ ասքէրլէրտէն պաղըլար մագթուլ վէ մէճուհ տիւշմիւշլէր:

Նիհայէթ իշիլէրին մէսէլէսինի թահգիթ իտէն գոմիսթնը մախ- սուս թէճէմիւլ օլընուպ, իտտաա- լարընըն գապուլ օլընտըղըն ի- ւան իթմէսի իլէ, սիւքիւնէթ հիւմք իթմէյէ պաշալմըլ: սա- լը կիւնտէն իթիպուրէն հէրքէս ի- շիւն տէվամ իթմէքտէ տիր: Հիւ- քիւմէթի իտարէի էօրֆիլէ իւան իթմիշ տիր: Պաղը գաննիլաթա կէօրէ՝ իշպու իսթիլալ անար- շիւթլէրին թէշվիթի վէ բարմաղը իլէ օլմուշ, վէ պիր թագրմանար. շիսթլէր տէրտէսթ օլընմըլար տըր:

ՄԻԻԹԷՆԷՎԼԻՅԷ

Նիւմտար Բուս մուհտիս Թօլսոյոյ աղըր սուրէթտէ խասթա օլուպ, թապիպլէր անըն սըհէթ պուլա- ճաղընա Բէք իւմիւտ կէօսթէրմէ յօրլար:

— Բրուսիա Բրէւսի Հայնրիհ Մ. Ամերիկայա միւթէվէս ճիւհէն «Քրօնըրնիւ վիլհէլմ» վարօրը իլէ հարէքէթ իթմիշ տիր: Իմքէրա- թօր վիլհէլմին Բրէնս Հայնրիհի

Մ. Ամերիկայա Եօլլամասը Էրան- քիլէրին տօսթլըղընը գաղանմագ մագսէտինէ մէպնի օլտըղընը ու- մում Էվրօբա ճէրիտէլէրի հագարագ, «Էվրօբատա տօսթլարը զայպ ի- տէն վիլհէլմ Ամերիկատա տօսթ արամայա չալըշլօր» տէյուպ իս- թիհգա իթմէքտէ տիրլէր:

Մէղքիւր կաղէթալար Սուլթան Համիտին վիլհէլմէ սատըգ տօսթ պուլընտըղընը Եա՝ ունուտըլօրլար վէ Եախօտ էհէմմիլէթսիզ կէօրի- յօրլար:

ԹԻԻՃՃԱՐԻՅԷ

ՎԱՌՆԱ, 9 Փետրուար

ՉԱԽԻՐԷ	
ՊՈՒՂՏԱՅ	
Վալօն լիպ. 49-53 հքթ. 7.—/7.80	
Արապա լիպ. 48-58 հքթ. 8.—/11.—	
ԱՐԲԱ	
Վալօն 100 քիլօ 9.50/9.60	
Արապա 35-45 լիպ. հքթ. 5.80/6.60	
ԵՈՒԼԱՅ	
Վալօն 100 քիլօ 12.40/—	
ՖԱՍՈՒԼԻՍ 100 քիլօ 15.—/22.—	
ՉԱՎՏԱՐ 7.—/7.40	
ՄԻՍԻՐ	
Արապա լիպ. 54-58 հքթ. 8.—/8.60	
Վալօն լիպ. 100 քիլօ 9.80/10.20	
ՏԱՐԸ 6.20/7.—	
Կիւնտէ 40-50 արապա կէլմէք- տէ տիր. Վալօն 10-15:	
Վալօն մուլմէլէսի ալթուն ֆը- րանքլէ, արապա կիւմիւշլէ: Նարօ- լէօն 22/60 հիսապը իլէ:	

ԲԱՄՈՒԿ

Վարնա մաղաղաւտտա իրիք սա- թըլարը:	
Ինկիլիզ իրիլիկ Ն. 8-14 9.50	
» » Ն. 18-24 12.—	
Եէրլի իրիլիկ Ն. 8-14 9.—	
Աթըլմըլ բամուլ հօղա 2.—	

ՍԱՐՐԱՖԻՅԷ

Նարուէն 22 ֆրանք 90 սանթ, Օսմ. լիւրասը 22.60 ալթուն ֆրանք

ՊԱՌԿԱԼԻՅԷ

Վարնա Բիպաւտտա պագալիլէ մալլէրին պու կիւնքի ֆիլաթը, ալ- թուն ֆրանք իլէ:	
ԿԱՀՎԷ 1.55/1.70	
ՇԵՎԷՐ ՆԵՄԵ 51	
» (Գէսմէ) սանտըգ 27.60	
ԲԻՐԻՆՃ Ճարոն չուլալը 35-38	
» Ֆիլիպէ » 33.50	
» Ինկիլիզ » 26.—	
» Բիզոն » 46.—	
ԿԱԶ Սանտըղը 6.70	
ՉԵՅԹԻՆ ԵՍՂԸ քիլօ —.90/—.	
ԳՈՒՐՈՒ ԻԻԶԻՍ —.32	

Յ. Կ. ՃԱՆԿԻԼԵԱՆ Յանձնակատար

Պատիւ ունիմ պատ. ագ- գայնոյ յայտարարելու թէ՝ Վառնայի, Շուվայի եւ Ռուսլոքի մէջ յանձնա- կատարութեան Երթեւեկութեան սկսած եմ, անպայման վստահութիւն, ապ- րանքներու գիններ խիստ դիւրամատ- չելի եւ յանձնարարութիւնները պիտի կատարուին շատ ճշգրտութեամբ:

Հասցէ՝

Յ. Կ. ՃԱՆԿԻԼԵԱՆ

Վառնա

Одговорникъ Н. Драгулевъ

Печ на Хр. Н. Войниковъ—Варна